ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Պատվիրատուն՝ ՀՀ մշակույթի նախարարությունը, ստորև ներկայացնում է իր կարիքների համար **հեռախոսակապի ծառայությունների մատուցման** ձեռքբերման նպատակով 2014 թվականի մարտի 7-ին **կնքված «Պետության կարիքների համար «ԱրմենՏել» ՓԲԸ** կողմից բաժանորդին մատուցվող հեռախոսակապի **ծառայությունների մատուցման պետական գնման» N 112744015** ծածկագրով պայմանագրում **2018 թվականի հունվարի 24-ին** կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված **փոփոխությունը** պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1: Բաժանորդի՝ ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի հաշվեհամարի փոփոխություն:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրի վավերապայմաններում «հ/հ 900011012870» թվերը փոխարինվել են «հ/հ 900011018729» թվերով:

Փոփոխության հիմնավորում: Պայմանագրի 6.4 կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Կ. Բաղալյանին:

Հեռախոս՝ 011 58-51-78:

Էլ. փոստ՝ gnumner@mincult.am:

Պատվիրատու՝ ՀՀ մշակույթի նախարարություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

«Պետության կարիքների համար «ԱրմենՏել» ՓԲԸ կողմից բաժանորդին մատուցվող հեռախոսակապի ծառայությունների մատուցման պետական գնման» թիվ 112744015 պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ

ք. Երևան «24» 01 2018 թ.

ՀՀ Մշակույթի նախարարությունը, ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող աշխատակազմի ղեկավար՝ Ս. Մուրադյանի, այսուհետ՝ «Բաժանորդ», մի կողմից, և «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ն, որը գործում է համաձայն իրեն տրամադրված թիվ 60 արտոնագրի (լիցենզիայի), ի դեմս լիազորված անձ Ռ. Գևորգյանի (նույնականացման քարտ՝ 002851202, տրված՝ 11.03.2014թ., 004-ի կողմից), որը գործում է 20.10.2017թ. տրված թիվ 00275/17 լիազորագրի հիման վրա, այսուհետ՝ «Օպերատոր», մյուս կողմից, երկուսը միասին այսուհետ՝ «Կողմեր», կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Ղեկավարվելով քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով Բաժանորդի և Օպերատորի միջև 2014 թվականի մարտի 7-ին կնքված «Պետության կարիքների համար «ԱրմենՏել» ՓԲԸ կողմից բաժանորդին մատուցվող հեռախոսակապի ծառայությունների մատուցման պետական գնման» թիվ 112744015 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 6.4 կետը, Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունը.

1.1.1 Բաժանորդի վավերապայմաններում «հ/հ 900011012870» թվերը փոխարինել «հ/հ 900011018729» թվերով:

2. Համաձայնագրի գործողության ժամկետը

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրման և կնքման պահից և գործում է անժամկետ:

2.2. Կողմերի միջև ձեռք բերված՝ սույն համաձայնագրին հակասող բոլոր նախկին պայմանավորվածությունները դադարում են գործել սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից:

3. Եզրափակիչ դրույթներ

3.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3.2. Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Բաժանորդ	Օպերատոր
ՀՀ մշակույթի նախարարություն	**«ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ**
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,	Հասցեն՝ ք. Երևան, Աիարոնյան 2
Կառավարական շենք Ն 2,	ՀՎՀՀ 02500052
հեռ.՝ (011) 58-51-78	հ/հ 163004038879
ՀՎՀՀ 02508054,	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
հ/հ 900011018729	
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործարարության կառավարում	
Աշխատակազմի ղեկավար՝	**«ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի լիազորված անձ՝**
_____	_____ Ռ. Գևորգյան
Կ.Տ	